Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ
ԱՐՊՀ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

XIX դարի սկզբներին Ռուսաստանի հետ Արցախի միացումից հետո աշխուժացավ գիտամշակութային կյանքը և մասնավորապես հայագիտությունը: Օրեցօր Շուշին դառնում էր Այսրկովկասի հայության ինչպես տնտեսական, այնպես էլ մտավոր կենտրոններից մեկը:

Հասարակական-քաղաքական կյանքը նոր խնդիրներ էր առաջադրում նաև հոգևոր-մշակութային գործիչներին: Լուսավորության և մասնավորապես հայագիտության զարգացումը, դժնդակ ժամանակներին դիմակայած ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից դարձնելը հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի նախ և առաջ մատաղ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական միասնական համակարգի կիրառմանը: Շուշիում հայագիտական մտքի կենտրոնի դերը ստանձնում է 1838 թ. բացված Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցը, որտեղ տարբեր տարիների դասավանդել են հայագիտության ակնառու գործիչներ Պ. Պռոշյանը, Մ. Բարխուդարյանը, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Լ. Մանվելյանը, Ե. Լալայանը, Ա. Կանայանը, Ստ. Դեմուրյանը, Վրթ. Փափազյանը, Հ. Աճառյանը, Ա. Չիլինգարյանը, Ն. Աղբալյանը, Ս. Մելիքյանը, Լ. Թախտաջյանը (ակադ. Ա. Թախտաջյանի հայրը), Ա. Տեր–Պողոսյանը, Հ. Մուսայելյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ դպրոցներում փոխվել են ուսուցման հին ձևերը, կազմվել են

նոր ուսումնական ծրագրեր և դասագրքեր: Վերոնշյալ գործիչները ոչ միայն դասավանդել են, այլև հենց այդ տարիներին ստեղծել համահայկական, ինչու չէ՝ նաև համամարդկային նշանակության ստեղծագործություններ:

Թեմականի բազմաթիվ շրջանավարտներ, իրենց կըրթությունը շարունակելով արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններում, դարձել են նշանավոր գիտնականներ, մշակութային, հասարակական պետական գործիչներ՝ Սիմոն Հախումյանը, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանցը (Տմբլաչի Խաչան), Լեոն, Արսեն Տերտերյանը, Գաբրիել Գուլիքևխյանը և ուրիշներ:

Հայագիտական մտքի զարգացումը Շուշիում պահանջում էր հայ մտավորականներից ուժերի գերլարում, քանզի ժամանակի պահանջներին համահունչ հայագիտության առաջընթացը հնարավոր էր միայն ռուսական արքունիքի կողմից տարվող մեծապետական-շովինիստական քաղաքականությանը դիմակայելու միջոցով: Հայ մտավորականների համառ ջանքերի շնորհիվ միայն Շուշիում հնարավոր դարձավ դպրոցներում հայագիտական առարկաների դասավանդումը: Նշվածի փաստացի վկայություններից է նաև 1889 թ. «Նամակ Ռուսական կառավարութեան կողմից նորից դպրոցներում կրօնի և հայոց լեզվի դասաւանդումը թոյլատրելու վերաբերյալ» գրությունը[1]:

19-րդ դարում Շուշիում հրապարակ են եկել բառարանագիտական և հայոց լեզվի քերականությանը նվիրված աշխատություններ: 1829 թ. Շուշիում լույս տեսավ Պողոս Ներսիսյանց Ղարաբաղցու «Համառոտ հայկական քերականութիւն», 1830 թ. Հովսեփ վրդ. Արցախեցու «Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց)» ուսումնասիրությունները և 1840 թ. «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» քերականության դա-

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Ե., 2001, էջ 356:

սագիրքը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գտչավանքի վանահայր Առաքել վրդ. Կոստանյանցի երկհատորյա մատենագրությունը, որն արժեքավոր աղբյուր է Արցախի մելիքությունների և նրանց առնչվող հարցերի, առավելապես՝ Արցախ-Ռուսաստան քաղաքական առնչությունների պատմության համար[2]:

19-րդ դարում Շուշիում հայագիտության բնագավառում արժանի ներդրում է կատարել Միրզա Ֆարուխը (Հարություն Ներսեսի Ղարաբաղցի): Նա ռուս–պարսկական պատերազմի ժամանակ 1805 թ. գերվել և տարվել է Պարսկաստան և քանի որ տիրապետում էր արևելյան և եվրոպական մի քանի լեզուների, նրան պետական ծառայության են ընդունում, դառնում է Թեհրանի սարդարի քարտուղարը: 1826–28 թթ. ռուս–պարսկական պատերազմի ժամանակ նրան հաջողվում է փախչել գերությունից և հիմնավորվել հայրենի քաղաքում՝ Շուշիում: Այստեղ էլ նա, համագործակցելով Բազելի ավետարանական քարոզչական ընկերության ներկայացուցիչների հետ, ձեռնամուխ է եղել գիտական–ուսումնական աշխատությունների հրատարակմանը: Գրել է Ղարաբաղի պատմությունը՝ «Թարիխ-Սաֆի» վերնագրով, որտեղ շարադրված են սկզբից մինչև 1820-ական թվականների իրադարձությունները:

Հայագիտական մտքի նոր վերելքը Շուշիում կապված է հայ պատմագիտության երախտավոր Լեոյի (Առաքել Բաբախանյան) անվան հետ, որը ծնվել է Շուշիում, ուսանել տեղի թեմական դպրոցում: Նրա՝ 60-ի հասնող կապիտալ աշխատությունների, հարյուրավոր հոդվածների մեջ ամփոփված են հայոց պատմության և գրականության բազմապիսի հարցեր: Լեոյի ուսումնասիրությունները գրված են հայրենասիրական շնչով և լեզվական հրապուրիչ բարձր ոճով: Լեոյի աշխատություններ մի զգալի մասը՝ «Վեպ թե պատմություն» (1887), «Կույր աղջիկը», «Վահան Սամիկոնյանը» (1888), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891), «Թաթախման գիշերը» (1892) և այլն, առաջին անգամ տպագրվել են Շուշիում:

[2] *Առաքել վարդապետ*, Դիզակի մելիքութիւնը, Նիւթեր հայ մելիքութեան մասին, պր. Ա, Վաղարշապատ, 1913:

Ականատեսի հավաստմամբ Արցախի պատմության կարևոր, առ այսօր վիճահարույց շրջանի (1917-23 թթ.) մանրամասները ներկայացրել է Միրզա Տեր-Սարգսյանը, որի «Կաթիլներ» խորագրով արձակ գործերի ժողովածուն հրատարակվել է Շուշիում 1914 թ.:

Հայագիտության այն ժամանակների համար նոր ուղղության՝ հնագիտական-հետազոտական աշխատանքների հիմնադիրը դարձավ Խաչիկ Դադյանը, որը հրատարակչական և գիտամանկավարժական լայն գործունեություն էր ծավալել Շուշիում: Սովորել է Շուշիի թեմական դպրոցում, այնուհետև Շուշիում աշխատել որպես ուսուցիչ: 1884-94 թթ. միաժամանակ զբաղվել է հնագիտական պեղումներով, վարել է զանազան պաշտոններ, կազմակերպել թանգարաններ, զբաղվել հետազոտական աշխատանքներով: Արցախում նա հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Առաջաձոր, Քոլատակ գյուղերի շրջակայքում և Սաղսաղան բերդում: Նա միաժամանակ հավաքել է նաև հայոց պատմությանն առնչվող բազմաթիվ վավերագրեր և հանձնել Ս. Էջմիածնին: Նմանատիպ աշխատանքներ Խ. Դադյանը կատարել է նաև Մակվում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում: Նրա անվան հետ են կապված Զվարթնոցի, Դվինի, Արմավիրի պեղումները: Հավաքել է ժողովրդական երգեր, գրի առել Մեծ եղեռնի ականատեսների պատմածները և այլն: Այդ ամենի արդյունքում այսօր հայագիտական մեծ արժեք է ներկայացնում Հայաստանի Ազգային արխիվի՝ Խաչիկ վրդ. Դադյանի ֆոնդը:

Անգնահատելի է ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի դերը հայ ազգագրության և հնագիտության զարգացման բնագավառում: Ժնևի և Լոզանի համալսարաններում հիմնավոր կրթություն ստանալուց հետո նա 1896 թ. Շուշիում

հիմնեց «Ազգագրական հանդեսը»: Իր շուրջը համախմբելով ժամանակի լուսավոր մարդկանց՝ Ե. Լալայանը նոր աստիճանի հասցրեց ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների դրվածքը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Ընկերության և նրա անխոնջ ղեկավարի ջանքերով ժողովված բազմապիսի նյութերը հիմք հանդիսացան Վրաստանի և Հայաստանի պատմության թանգարանների հիմնադրման համար:

Շուշիում է ծնվել և մինչև 1878 թ. ապրել հայ արձակի դասականներից մեկը՝ Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը): Նա գրական ճանաչման արժանացավ իր «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» (1881) պատմական դրամայով: Մուրացանի ստեղծագործությունների գլուխգործոցն է «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:

Հայ ազգագրության մեջ իր ուրույն տեղն ունի Տմբլաչի Խաչանը (Կոնստանդին Մելիք-Շահնազարյանց): Նրա առաջին ստեղծագործությունը՝ «Ղըլցէ կնանոց պընդրփեշակը», որը, գրված հայրենի բարբառով, աչքի է ընկնում գունեղ պատկերներով և ժողովրդական իմաստություններով: Նա գրել է նաև մանկական ստեղծագործություններ, պիեսներ, կատարել թարգմանություններ, հավաքել ժողովրդական հեքիաթներ, խաղիկներ և այլն:

Շուշիում հայագիտական մտքի զարգացումը անհնարին է պատկերացնել առանց հրատարակչական գործի կազմակերպման: Այս գործի երախտավորները դարձան Բազելի քարոզչական ընկերության գործիչները, Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը, Միրզաջան Մահտեսի Հակոբյանցը, Երվանդ Լալայանը և ուրիշներ: Հայտնի փաստ է, որ 1874 թ. մինչև 1920 թ. Շուշիում լույս են տեսել 21 անուն թերթ և հանդես, որից 19-ը հայերեն և 2-ը՝ ռուսերեն: Շուշիում հրատարակված պարբերականները տարբեր հոսանքների գաղափարախոսներ էին, ունեին շեշտված դիրքորոշում հասարակական-քաղաքական հրատապ հարցերի նկատմամբ, ինչպիսիք

էին՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, ազգային մշակույթի ստեղծման, աշխարհաբար գրական լեզվի մշակման հարցերը և այլն: Այս տեսանկյունից կարևորվում են «Հայկական աշխարհ» (1874 թ.), հրատարակիչ՝ Խորեն Ստեփանյան, «Գործ» հանդեսը՝ խմբագիր-հրատարակիչ Սիմեոն Հախումյան, «Ազգագրական հանդեսը»՝ խմբագիր-հրատարակիչ Երվանդ Լալայան և այլն:

Այսօրինակ նվաճումներով Շուշին ոտք դրեց 20-րդ դար: